Ի. Սմբատ ասաց Բաբեկին՝. "Տեղս ախորժելի է, իսկ ամրոցի օդը քեզ համար ծանր է. գնանք առաւօտեան ժամին որսի"։ Բաբեկ պատասխանեց՝. "Եթէ քեզ հաճոյ է, պատրաստութիւն տես, որ առաւօտ գնանք"։ Ի. Սմբատ տեղեկացրեց Սայիդին եւ Բուղբարին իւր որոշման մասին եւ հրամայեց, որ նոցանից մէկը դարան մտնի լեռների այս ինչ տեղում, իսկ միւսը՝ այս ինչ տեղում՝ իրանց զօրագնդով։ Երբ ի. Սմբատ եւ Բաբեկ առաւօտեան գնացին (որսի), ի. Սմբատ ուղարկեց մի սուրհանդակ Սայիդի եւ մի այլ սուրհանդակ Բուղբարի մօտ, որոնք նոցա հետ միասին եկան այն տեղը, ուր գտանուում էին Բաբեկ եւ ի. Սմբատ, զննեցին Բաբեկին, ցած իջան եւ՝ պահելով մէկը նորա մի կողմը, միւսը՝ նորա միւս կողմը ձերբակալեցին նորան։

Իսկ Աբդուլլահ՝ Բաբեկի եղբայրը՝ գնաց Իսայ ի. Իւսուփ ի. Ստեփաննոսի մօտ։ Երբ Օշին ձերբակալեց Բաբեկին եւ նորա մարդիկը, նա սկսեց պարել Աբդուլլահի թագստեան տեղը եւ՝ իմանալով, որ նա ի. Ստեփաննոսի մօտ է, գրեց նորան, որ նա ուղարկէ Աբդուլլահին իւր մօտ։ Ի. Ստեփաննոս կատարեց նորա հրամանն, եւ Օշին բանտարկեց նորան Բաբեկի հետ մի տան մէջ, հրամայելով պահապաններին հսկել նոցա վերայ, իսկ ինքն տեղեկացրեց Մուտասիմ ամիրապետին եղելութեան մասին։

235 թ. Մուտավակկիլ յանձնեց իւր որդի Մուտազզին Խորասան, Տաբարիստան, Ռայ, Հայաստան, Ատրպատական եւ Ֆարս։

236 թ. մեռաւ Աբու Սայիդ Մուհամմեդ ի. Իւսուփ՝ Հայաստանի եւ Ատրպատականի կառավարիչը։ Մուտավակկիլ դրեց Իւսուփին նորա հօր իշխած հպատակ երկրների վերայ, ապա նշանակելով նորան հարկերի եւ հողերի վերայ։ Իւսուփ